



ԿՈՒՍԱԿՐՕՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Իրաքահայ թեմը երիտասարդ եք զարգացած հոգեւորական ոյժերով օժտելու ճանապարհին աշակերտներ կը դրկուին Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարնը, հոգեւոր ուսանողներու դասընթացքներ կը կազմակերպուին Առաջնորդարանի հսկողութեան ներքոյ Պաղտատ, ինչպէս նաեւ երիտասարդ հոգեւորականներ կը դրկուին արտասահմանի համալսարաններ բարձրագոյն մասնագիտական ուսում ստանալու:

Թեմիս հոգեւոր ուսանողներէն մէկն էր բարեշնորհ Հրաչ Սարկաւազ Յակոբեան որ ժամանակ մը առաջ աւարտած էր Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի շրջանը:

Թեմիս բարեխնամ առաջնորդի միջնորդագրութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր հաւանութիւնը տուաւ բարեշնորհ Հրաչ Սարկաւազ Յակոբեանը կուսակրօն քահանայ ձեռնադրելու:

17 Փետրուար 1993ի երեկոյեան տեղի ունեցաւ «կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտաւիլակութեամբն արժանաշնորհ Տ. Վարդան Քհնյ. Պատարեանի, որը վկայեց նորընծայի հոգեւոր եւ իմացական պատրաստակամութեան ու արժանիքներու մասին:

Քահանայական կոչումի արարողութենէն ետքը, նորընծան հրապարակաւ արտասանեց Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ «Հաւատոյ խոստովանութիւն»ը՝ ըստ Ս. Գրիգոր Տաթեւացիի սահմանած բանաձեւին:

Յաջորդ օրը, հինգշաբթի 18 Փետրուար, Սրբոց Վարդանանց մեծ տօնին առթիւ հայ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը փութացած էր Պաղտատի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցին մասնակցելու ազգային այս մեծ տօնի հոգեպարար եւ հանդիսաւոր Ս. պատարագին եւ աբեղայական օծման: Օրուան պատարագիչն էր թեմիս բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ Եպս. Ասատուբեանը: Առաջնորդարանիս հրաւերով արարողութեան ներկայ գտնուեցան Պապական դեսպանն ու քույր եկեղեցիներու հոգեւոր պետերը եւ այլ եկեղեցականներ:

Պատարագը կանգ առաւ «Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով» աղօթքը: Նորընծան ծնրադիր քայլերով բարձրացաւ Ս. Սեղան: Քիչ յետոյ հնչեց «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» հոգեւորոգ շարականը: Եկեղեցին նուիրելոյն կը կոչէ ձեռնադրութեան:

Ողջոյնի պահէն առաջ պատարագիչ Սրբազան հայրը սրբալոյս մի-
ռոնով օծեց նակատն ու ձեռքը նորընծային զայն վերանուանելով Տ. Տաթեւ
աբեղայ: Քարոզի ընթացքին Սրբազանը տուաւ սա բացատրութիւնը նոր
անուան առնչութեամբ:

«Այս օրերու Հայաստան աշխարհ կը ներխուժեն բազում քարոզիչներ
քրիստոնէական տարբեր դասանանքներու պատկանող, ինչպէս նաեւ բազում
տեսակի աղանդաւորներ: Մարդորսութեամբ կ'ուզեն գնել մեր ժողովուրդի
խիղճը, դարերու հոլովոյթով վասն Յիսուսի եւ հաւատոյ նահատակեալ ժո-
ղովուրդ մը դարձեալ «քրիստոնէացնելու» հիւանդագին եւ մոլեռանդ մոլեգ-
նութեամբ: Քրիստոնէական ոգեկանութենէ զուրկ այս գործելակերպը նոր
չէ մեր ժողովուրդին համար, անցեալի մէջ ալ նմանօրինակ փորձեր եղած
են: Սակայն մեր ժողովուրդի եւ մեր Եկեղեցոյ պատմութեան մէջ գտնուե-
ցան քաջարի եկեղեցականներ, որոնք բանի եւ գործով պայքարեցան ընդ-
դէմ այդ միարարական շարժումներուն... իր օրին մշտապէս պատնէշի վրայ
մնաց մեր ամենամեծ, ամենահմուտ հոգեւորականներէն Գրիգոր Տաթեւա-
ցին: Մեր Եկեղեցոյ այս վերջին Սուրբը ծնած է 1346 թուին եւ վախճանած
1410 թ.: Տաթեւացին՝ բազմակողմանի տաղանդաւոր որպէս գիտնական, քա-
րոզիչ, նկարիչ, գեղագրիչ, հմուտ լեզուաբան ու Աստուածաբան պայքար
մղեց ի խնդիր Հայաստանեայց Եկեղեցոյ ուղղափառութեան ու ընդհանրա-
կան հանգամանքին: Ուստի մեծ վանքին ու վանականին ի յիշատակն մենք
երբեմնի Հրաչ Սարկաւագը կոչեցինք Տաթեւ անունով որպէսզի նորօծ Հայր
Սուրբը նախանձախնդրութեամբ ծառայէ մեր Մայրենի Եկեղեցոյ, ջանադիր
անոր պայծառացման ու վերելքին»:

Վեղարի օրհնութեան եւ տուչութեան հանդիսութիւնը կատարուեցաւ
նորբաթ, 19 Փետրուարին Ա. պատարագի ընթացքին: Աւարտին՝ յանուն Ամե-
նայն Հայոց Վեհափառ Հայրապետին Առաջնորդ Սրբազանը, Տ. Տաթեւ ա-
բեղային պաշտօնապէս ընդունեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանու-
թեան շարքերէն ներս: Յետ պատարագի առաջնորդարանի դահլիճին մէջ,
խարտաւիլակ Տէր Հայրը ներկայացուց նորօծ հոգեշնորհ Հայր Սուրբը՝ Ա-
ռաջնորդ Սրբազան Հօր: Ապա Նորընծայ Հայր Սուրբը արտասանեց իր
խօսքը՝ շնորհակալութիւն յայտնելով Առաջնորդ Սրբազան հօր եւ Ազգային
Կեդրոնական Վարչութեան ու խոստացաւ հարազատ զաւակը մնալ Հայաս-
տանեայց Առաքելական Եկեղեցոյ եւ ըլլալ հաւատարիմ մէկ անդամը Ա.
Էջմիածնի Լուսաւորչահիմն միաբանութեան: Առաջնորդ Սրբազանը՝ նորաօծ
հայր սուրբն եւ ներկայ բարեսէր հայրենակիցներուն բաշխեց իր օրհնութիւ-
նը: Տեղի ունեցաւ շնորհաւորութիւն:

Հայր Սուրբը քառասունքի կանոնական շրջանը պիտի անցնէ Ա. Կա-
րապետ վանքի եւ Ազգային ծերանոցի շրջափակէն ներս

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԻՐԱՔԻ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԱԹԵԻ ԱԲԵՂԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ

Ծնած է 1965 թ. Յուլիս 7-ին, Իրաքի Մուսուլ քաղաքի մէջ: 1973 թ. ընտանիքով բնակութիւն հաստատած է Պաղտատ քաղաքի մէջ, նախնական ուսումը ստացած է Պաղտատի Հայոց «Թարգմանչաց» դպրոցը: 1979 թ. միջնակարգ ուսումը վերջացնելէ ետք, նոյն թուականին ընդունուած է Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը: Զեռամբ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի, 1984 Դեկտեմբերին, ստացած է ուրար կրելու իրաւունք, իսկ 1986 թ. Փետրուար 14-ին Մայր տանարի մէջ, դարձեալ Տ. Յուսիկ Արք.-ի կողմէ ձեռնադրուած է սարկաւագ: 1986 թուի Յուլիսին յաջողութեամբ աւարտած է հոգեւոր ճեմարանը, իսկ 1988 թ. Մարտի 10-ին նոյն յարկի Աերքոյ պաշտպանած է «Եվսեբիոս Կեսարացին Հայ Մատենագրութեան մէջ» թէմայով պատրաստած աւարտանաոր՝ արժանանալով գերազանց գնահատանքի:

Ապա 1989—1990ին՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի հովանաւորութեամբ ֆրանսերէն լեզուի դասընթացքներու հետեւած է Ժընեի Շուլց դպրոցը եւ Ժընեի Համալսարանը: Այս միջոցին ծառայած է Ժընեի Սուրբ Յակոբ եկեղեցոյ մէջ որպէս Սարկաւագ եւ ատենադպիր Զուիցերիոյ Հայ Եկեղեցոյ խորհուրդի վարչութեան: Այս ընթացքին կազմակերպած է Զուիցերահայ Միութեան Երիտասարդաց մասնաճիւղը ինչպէս նաեւ Կիրակնօրեայ դպրոցի մէջ՝ դասաւանդած է կրօնի դասեր: Իսկ 1990 թ.էն—1992ին ծառայած է որպէս Սարկաւագ Հոլանտայի Ս. Հոգու եկեղեցոյ մէջ եւ կազմակերպած է մանուկներու դպրաց դասը եւ եղած է խորհրդատու անդամ՝ Հոլանտայի Ազգային Կեդրոնական վարչութեան:

Իրաք վերադարձած է 13 Փետրուար 1992ին, սկսած է յաճախել առաջնորդարան եւ մանակցիլ եկեղեցական արարողութեանց:

Իրաքահայ թեմի Բարեխնամ Առաջնորդի միջնորդագրութեամբ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հաւանութեամբ բարեշնորհ Հրաչ Սարկաւագ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 18 Փետրուար 1993 ձեռամբ իրաքահայ թեմի Բարեխնամ Առաջնորդ Տէր Աւագ Եպս. Ասատուրեանի, վերանուանելով Տ. Տաթեւ արեղայ:





ՄԻ ՊԱՀ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ